ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**.

   Տիգրան Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

   Արթուր Մելիքյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության պետի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**.

   Սերբիայի Հանրապետության մայրաքաղաք Բելգրադ, 2025 թվականի սեպտեմբերի 22-26-ը

3. **Հրավիրող կողմը**.

   Եվրոպական GF-TADs կազմակերպության գրասենյակ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**.

   Եվրոպայի տարածաշրջանում կենդանիների անդրսահմանային առաջնահերթ հիվանդությունների հարցերով փորձագիտական մշտական խմբերի GF TADs տարածաշրջանային 1-ին համաժողով.

5. **Քննարկված թեմաները (հարցերը)**.

   Դաբաղ, խոզերի աֆրիկյան ժանտախտ, մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ, կատաղություն, հանգուցային մաշկաբորբ և թռչնագրիպ հիվանդությունների անասնահամաճարակային իրավիճակը մասնակից երկներում, հիվանդության ներթափանցման կանխմանն ուղղված միջոցառումների ներկայացում, հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մասնակից երկրների (Վրաստան, Մոլդովա, ՈՒկրաինա, Ադրբեջան, ԵՄ և Բալկանյան երկրներ) կողմից ներկայացվել են ելույթներ և ներկայացումներ անդրսահմանային առաջնահերթ հիվանդությունների՝ դաբաղ, խոզերի աֆրիկյան ժանտախտ, մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ, կատաղություն, հանգուցային մաշկաբորբ և թռչնագրիպ հիվանդությունների անասնահամաճարակային իրավիճակը, հիվանդության ներթափանցման կանխմանն ուղղված միջոցառումների և հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումների վերաբերյալ:

Մասնակից երկրներում, որպես հիվանդության ներթափանցման կանխմանն ուղղված միջոցառումներ, իրականացվել են՝ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը ուղղված վայրի կենդանիների դիակների հավաքում և ոչնչացում, մոնիթորինգ, արագ արձագանքում, հակաանասնահամաճարակային միջոցառումներ, անասնահամաճարակային քարտեզագրում, ծանուցում: Միաժամանակ իրականացվել են հիվանդության կանխարգելմանն ուղղված վարժանքներ՝ այդ թվում միջազգային կառույցների օժանդակությամբ:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԿԱՀԿ) տարածաշրջանի ղեկավար Բուդիմիր Պլավշիչի օժանդակությամբ կայացել է հանդիպում Սերբիայի Հանրապետության անասնաբուժության ոլորտի լաբորատորիայի ղեկավար Միշո Կորոլևիչի հետ: Վերջինիս հետ քննարկվել են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ենթակայությանը հանձնված Հանրապետական անասնաբուժասանիտարական բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ) և Սերբիայի Հանրապետության անասնաբուժության ոլորտի լաբորատորիայի միջև համագործակցության հուշագրի կնքման հարցեր, որի շրջանակներում քննարկվել են նաև ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ին նախատեսվող մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության հայտնաբերմանն ուղղված թեստերի օժանդակության հարցեր, ինչն էլ օգտագործվելու է Հայաստանի Հանրապետությունը մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդությունով ազատ ճանաչման գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ԿԱՀԿ-ի միջոցով մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդությունով ազատ ճանաչման ծրագիրը, սակայն ծրագիրը 2025 թվականին ֆիանանսավորում չի ստացել: Ծրագրի իրականացումը 1 տարով չուշացանելու նպատակով՝ Բուդիմիր Պլավշիչի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ վերոնշյալ համագործակցության և օժանդակության շրջանակներում տրված մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության 2026 թվականին իրականացվող լաբորատոր թեստերի արդյունքները հաշվի կառնվեն որպես 2025 թվականի տվյալներ, քանի որ նմուշառումը իրականացվել է 2025 թվականին: ԿԱՀԿ-ի տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչ Դիմիտրի Մորոզովի հետ քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում անասնաբույժների մասնագիտական կարողությունների բարձրացմանն ուղղված ուսուցմանն առնչվող հարցեր:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

01.10.2025թ.